

*Համայնքային գրադարանի դերը հասարակական և կրթական
համակարգում*

*Սովորող՝ Ադուն Նալբանդյան
Ղեկավար՝ Լուսինե Ալեքսանյան*

Գրախոս՝ Հոփսիմե Գալստյան

Ադունիկ Նալբանդյանի դիպլոմային աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և գրականության ցանկից: Առաջին գլխում ներկայացված է գրադարանի ստեղծման պատմությունը, գրադարանի դերը և նշանակությունը ժամանակակից աշխարհում, առաջին գրքի ստեղծումը, էլեկտրոնային գրքի, գրացուցակի մասին: Երկրորդ գլխում ներկայացված է գրադարանի զարգացման, այնտեղ կազմակերպվող միջոցառումների, զարգացման ու առաջընթացի և բլոգի մասին: Աշխատանքն ունի նաև եզրակացություններ և գրականության ցանկ:

Աշխատանքում ուսանողը կարողացել է տրամաբանորեն և հստակ ներկայացնել հարցի պատմությունը, սակայն որոշ գլուխներում առկա են նաև շեղումներ թեմայից: Կարողացել է ճիշտ վերլուծել և համադրել թեմային առնչվող գրականությունը: Գրականության ընտրությունը կատարվել է ճիշտ, սակայն չի օգտագործվել օտարալեզու ոչ մի աղբյուր: Գրականության ցանկում ներկայացված աղբյուրները մեջբերումների կամ հղումների ձևով ոչ բոլոր տեղերում են արտացոլված տեքստում: Ուսանողը կարողացել է հավուր պատշաճի ներկայացնել իր սեփական մոտեցումը թեզի վերաբերյալ: Աշխատանքում առկա են վրիպումներ, որոնք, սակայն, ընդհանուր պատկերը չեն փչացնում:

Աշխատանքը հետքերի էր, բայց հնարավոր էր ավելի լավ ներկայացնել:

